



ՏԱՆՁԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ





Նախաբան

Սույն ձեռնարկի նպատակն է տանձենու մշակությամբ զբաղվող ֆերմերներին ծանոթացնել տանձենու աշխատանքին արժեքավոր սորտերից մեկի՝ «Անտառային գեղեցկուհու», մշակության առանձնահատկություններին:

Գրքույկը անվճար տրամադրվելու է ֆերմերներին նպատակ ունենալով ավելացնել սրանց գիտելիքները այգիների իսամքի, մշակության և հիվանդությունների ու վնասատուների դեմ արդյունավետ պայքարի աշխատանքների կազմակերպման մեջ:

Գրքույկը կազմել են

գ.գ.դ., պրոֆեսոր Յ. Թերլեմեզյանը, գ.գ.թ. Ս. Ասատրյանը և Շեն ԲՅԿ՝ Ն. Շահմուրադյանը:



ԱՆՏԱՌԱՅԻՆ ԳԵՂԵՑԿՈՒԻ

Հնդավոր պտղատեսակների մեջ տանձենին իր ժողովրդա-տնտեսական նշանակությամբ ինձորենուց հետո գրավում է երկրորդ տեղը: Հայաստանում տանձենու սորտային կազմը զգալի կախում ունի գոտիների ագրոկլիմայական պայմաններից: Այս մշակաբույսը ցրտադիմացկունությամբ զիջում է ինձորենուն:

Տանձենու սորտերի մեջ իր յուրատեսակ նրբությամբ և համային հատկանիշներով առանձնանում է «Անտառային գեղեցկուհի» սորտը: Այն ստեղծվել է Բելգիայում և տարածվել Վան Մոնսի միջոցով 1910 թվականից: Ներկայումս այս սորտը մշակվում է Եվրոպայի, Ասիայի, Հյուսիսային Ամերիկայի բազմաթիվ երկրներում: Հայաստանի Հանրապետությունում այն առկա է տանձենու մշակությամբ զբաղվող բոլոր գոտիներում:

Այս սորտի ծառերը խոշոր են, երբեմն միջակ մեծության: Պսակը լայն բրգաձև է, նոսր տերևակալած, կմախքային ճյուղերը ցողունի հետ կազմում են մեծ անկյուններ, երկար են, հաստ, լայն տարածված, քիչ կախված: Կեղևը հարթ է, մոխրագույն: Միամյա շիվերը հաստ են կամ միջակ հաստության, քիչ աղեղաձև, թույլ ծնկավոր, հարթ, մուգ կարմրադարչնագույն, կարմրավուն շառագունած, մանր սպիտակավուն ոսպնյակներով, թույլ թավոտ:

Տերևները միջակ մեծության կամ ավելի փոքր են, երկարավուն-ձվաձև, կարճ, սրածայր գագաթով, մանր սղոցա-ատամնավոր եզրերով, փայլուն, լերկ, հարթ, հաստ, մուգ կանաչ, աճման սկզբում դեղնականաչ, վարդագույն երանգով, աշնանը՝ գորշ դեղին, կարմրավուն կամ մուգ մանուշակագույն շառագունած: Տերևակոթը երկար է՝ 4,5-6,0 սմ, բարակ, դեղնականաչավուն:

Ծաղկաբողբոջները միջակ մեծության են, կոնաձև, դարչնագույն: Ծաղիկները լինում են ծաղկաբույլերում՝ 6-8 հատ: Կոկոնները միջակ մեծության են, գնդաձև: Պսակաթերթիկները միջակ մեծության են, կլոր, գոգավոր, շատ նեղացած հիմքով, միմյանցից հեռու դասավորված, բազմապսակաթերթիկավոր, երկշարք պսակով, կոկոնում՝ վարդագույն, բացված ժամանակ՝ սպիտակ: Առեջները մանր են, վարսանդներին հավասար, կամ ցածր:

Պտուղները խոշոր են կամ միջակ՝ 150-350 գրամ քաշով, գաճաճ պատվաստակալների վրա՝ ավելի խոշոր, բութ-ձվաձև, կամ կարճ հատված կոնաձև, միանգամայն հարթ: Պտղի ամենամեծ տրամագիծը մեջտեղից վեր է: Պտղակոթը միջակ երկարության ու հաստության կամ հաստ է, ուղիղ կամ քիչ աղեղաձև թեքված, ծայրում՝ լայնացած: Ձագարը մակերեսային է, նեղ, հարթ պատերով: Ափսսն լայն է, մակերեսային կամ միջակ խորության, հարթ կամ թույլ ծալքավոր պատերով: Բաժակը փոքր է, կիսաբաց: Բաժակաթերթիկները մանր են, լայն եռանկյունաձև, կանգուն, կարծր, գորշ մոխրագույն: Մաշկը բարակ կամ միջակ հաստության է, հարթ, փայլուն, հավաքելիս կանաչ, արևի կողմից՝ գորշ կարմիր թշով, երբեմն ամբողջովին կարմիր, հասունանալիս դառնում է դեղին կամ ոսկեգույն դեղին, վառ կարմիր թշով, շատ գեղեցիկ, միջակ ժանգապատ, խիտ ու համաչափ ցրված, բաժակի շուրջը ավելի խիտ, շատ նկատելի ենթամաշկային կետերով, գորշ ձիթագույն ժանգաքծերով, հատկապես բաժակի և կոթունի մոտ, որը խոնավ պայմաններում պատում է պտղի մեծ մասը: Մաշկը ունի շատ հաճելի մուսկատի բուրմունք, որը զգացվում է լրիվ հասունացման ժամանակ: Ենթաբաժակային խողովակը միջակ մեծության է, կարծր, բաժակաձև: Առեջների մնացորդները բարձրադիր են: Սրտիկը միջակ մեծության է, իլիկաձև, պտղի մեջտեղում, թույլ սահմանագծված: Սերմնախցիկները երկար-ձվաձև են, փակ, հարթ պատերով: Սերմերը խոշոր են, սրածայր, լիքը, բաց դարչնագույն: Պտղամիսը սպիտակ-դեղնավուն է, շատ նուրբ, հյութալի, հալվող, գինեքաղցր, դուրեկան հոտով ու բուրմունքով, դեսերտային գերազանց որակով:

Անտառային գեղեցկուհու ծառերը տանձենու այլ սորտերի հետ համեմատած բավականին ցրտադիմացկուն են, երկարակյաց, ապրում են մինչև 100 տարի և ավելի, քիչ պահանջկոտ են հողի նկատմամբ, լավ աճում ու պտղաբերում են ոչ շատ խոնավ, խոր, հարուստ ու փուխր հողերում, ոռոգման դեպքում վատ չեն զգում նաև չոր, ավելի աղքատ ու ավագոտ հողերում: Տերևները չեն վնասվում բարձր ջերմաստիճանից և օդի չորությունից:

Բերքատվության շրջան մտնում են 7-8-րդ տարում: Հայաստանի ցածրադիր գոտում սկսում են պտղաբերել 5-6-րդ տարում, իսկ սերկևիլի վրա պատվաստվածները՝ 3-4-րդ տարում: Պտղաբերում են հիմնականում օդանիստերի վրա: Ծաղկումը տեղի է ունենում միջին ժամկետում: Բերքատվությունը բարձր է, ոչ ուժեղ պարբերականությամբ: Լրիվ բերքատվության շրջանում մեկ ծառը տալիս է 150-200 կգ, բարենպաստ պայմաններում՝ նույնիսկ 400 կգ և ավելի: Պտուղները թույլ են կպած ծառին և օդի խոնավության ցածր լինելու, ինչպես նաև քամիների դեպքում թափվում են:

Անհրաժեշտ է կանոնավոր ետի միջոցով թույլ չտալ ճյուղերը շատ երկար են և քամիներից ուժեղ տարուբերվեն, բերքահավաքը կատարել ժամանակին, նեցուկներ տալ ճյուղերի տակ՝ քամիների ազդեցությունը մեղմացնելու նպատակով: Պտուղներին ուժեղ վնասում է պտղակերը, իսկ նոր կազմակերպված պտուղներին՝ սղոցողը: Խոնավ շրջաններում ծառերի բոլոր մասերը և պտուղները վարակվում են քոսով:

Ցածրադիր և տաք շրջաններում բերքը հավաքում են օգոստոսին, իսկ բարձրադիր շրջաններում՝ սեպտեմբերի կեսերին: Պտուղները շատ բարձր որակ ունեն 15-20 օր պահելու դեպքում:

Բարձր ազոտեխնիկայի պայմաններում այս սորտը կարող է վաղ աշնանային և աշնանային լավագույն սորտերից մեկը լինել: Հայաստանի գրեթե բոլոր շրջանների համար:

Լավագույն փոշոտիչներն են՝ Բոն Լուիզ Ավրանշի, Վիլյամս ամառային, Կլապի սիրելին, Ժոզեֆինա Միխելսկայա, Բյորե Հարդի, Բյորե Լիգել, Ալեքսանդրովկա, Լիմոնկա, Գլիվա ուկրաինյան սորտերը:

Սորտի արժանիքներն են՝ ծառերի ցրտադիմացկունությունն ու չորադիմացկունությունը, արտաքին պայմաններին հարմարվելը, բարձր բերքատվությունը և պտուղների բարձր որակը: Թերություններն են՝ վնասատուներով ու խոնավ վայրերում հիվանդություններով ուժեղ վարակվելը, քամիների նկատմամբ պտուղների թույլ դիմադրությունը:



ՏԱՆՁԵՆՈՒ ԷՏԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ




Տանձենու ետի և ձևավորման աշխատանքները կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել պատվաստակալը, սորտը, տնկման խտությունը, մշակության, պարարտացման, ոռոգման, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցառումները: Ծառերը պետք է ձևավորել՝ թողնելով 5-7 ամուր կմախքային ճյուղեր, որը պետք է համապատասխանի սորտի կենսաբանական առանձնահատկություններին և մոտ լինի նրա բնական կառուցվածքին: Ծառերի սաղարթի բնական ձևերի և չափերի վերակառուցումը սկսվում է այգու տնկման առաջին տարվանից և ավարտվում 4-5-րդ տարում: Ծառերի ձևավորման ժամանակ անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները. կենտրոնական ուղեկցողի հետ սուր անկյուն կազմող ճյուղերը ետել՝ պահպանելով ուղեկցողի իշխող դերը: Խորհուրդ է տրվում կիրառել ծառերի ձևավորման նոսր հարկային սաղարթ եղանակը: Ետը և ձևավորումը նպատակային այն միջոցառումն է, որը անմիջապես ներգործում է ծառի վրա և հնարավորություն է տալիս

- Սննդանյութերի նպատակահարմար բաշխումը ծառի աճող և պտղաբերող օրգանների միջև:
- Ուժեղացնել երիտասարդ ծառերի աճակալող ճյուղիկների և պտղագոյացումների զարգացումը, արագացնել նրանց անցումը ապրանքային բերքատվության շրջանը:
- Ակտիվ վիճակում պահպանել ծառերի աճեցողությունը ու բերքատվությունը:

Գոյություն ունեն ետի մի քանի ձևեր - շիվերի կարճացում, նոսրացում, սաղարթի իջեցում և երիտասարդացում, որոնք կարող են կիրառվել առանձին և միաժամանակ: Շվերի կարճացումը լինում է թույլ ընդհանուր աճի 1/4-1/3, միջակ 1/3-1/2/ և ուժեղ 1/2-2/3/ չափով: Ուժեղ կարճացման դեպքում աճը ուժեղանում է, սակայն տեղի է ունենում բերքի կորուստ: Նոսրացմամբ կարգավորվում է ճյուղերի համաչափ դասավորվածությունը և բարելավվում է սաղարթի կենտրոնական մասի լուսավորությունը: Ընդ որում, սնկային հիվանդությունները թույլ են զարգանում, պտուղները ունենում են նորմալ մեծություն և սորտին համապատասխան գունավորում և որակ:



Ետը, ըստ կատարման ժամկետի, լինում է ձմեռային և ամառային: Ձմեռային Ետը կատարում են այն շրջաններում, որտեղ խիստ ցրտեր չեն լինում, սովորաբար կատարում են գարնանային ուժեղ ցրտերից հետո: Ամառային Ետի նպատակն է կարճացնել և նոսրացնել կանաչ շվերը և հոռաշիվերը: Ետը պետք է կատարել սուր գործիքներով, բողբոջից 1-1.5 սմ ներքև, իսկ վերքերին քսել այգու մածիկ՝ խուսափելով բութակներից:



ՏԱՆՁԵՆՈՒ ԷՏԻ ՕՐԻՆԱԿ







ՏԱՆՁԵՆՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՋԱՐԸ ԴՐԱՆՑ ԴԵՄ


Ինչպես արդեն նշել ենք, տանձենին վնասվում է մի շարք հիվանդությունների և վնասատուների կողմից: Ստորև ներկայացվում են առավել վտանգավոր տեսակների համառոտ նկարագրությունը և պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Հիվանդության և վնասատուի հասցված վնասի նկարագրությունը	Պայքարի միջոցառումները	Նկարներ
<p>ՊՏՂԱՏՈՒՆԵՐԻ ԲԱԿՏԵՐԻԱԼ ԱՅՐՎԱԾԸ</p> <p>Հիվանդությունն արտահայտվում է շվերի, ծաղիկների և պտուղների վրա: Նոր բացված ծաղիկներն ու երիտասարդ շվերը հանկարծակի թառամում են և գորշանում, տերևները նույնպես սևանում են, ոլորվում, սակայն չեն թափվում: Վարակված խակ պտուղները մի տեսակ կնճռոտվում են, սևանում և մնում ծառի վրա: Հիվանդության արտահայտման ձևը շատ նման է կրակով այրվածի:</p> <p>Վարակված ճյուղերի կեղևը հաճախ ծածկվում է բշտիկներով և ճաքճքում: Չորացած հիվանդ կեղևը զգալի բարակում է: Հիվանդ ու առողջ հյուսվածքների սահմանը լավ նկատելի է: Սկսվելով վերևի ճյուղերից՝ հիվանդությունը կեղևով և լուբով տարածվում է դեպի ներքև (չի թափանցում անոթները): Հիվանդությունը կարող է ընդգրկել ամբողջ ծառն ու առաջացնել դրա չորացում: Հիվանդությունն առավել հաճախակի փոխանցվում է նոր ճյուղերի ու ծառերի վրա անձրևի միջոցով: Ընկնելով բույսի վրա՝ բակտերիան բույսի մեջ է թափանցում վերքերի, վնասվածքների, ճեղքերի և նույնիսկ հերձանցքների միջոցով: Հիվանդության տարածման գործում մեծ է միջատների դերը (լվիկներ, լվիճներ, կեղևակերներ, հատկապես՝ մեղուներ): Վարակը կարող է փոխանցվել նաև պատվաստման ժամանակ:</p>	<ul style="list-style-type: none"> - Խստիվ պահպանել կարանտինային միջոցառումները: - Հիվանդության հայտնաբերման դեպքում. կտրել, այգուց դուրս բերել և այրել վարակված ծառերը կամ ճյուղերը: - Կտրոններ, պատվաստացուներ վերցնել միայն առողջ ծառերից: - Վաղ գարնանը կատարել ծառերի սանիտարական հատումներ: - Առողջ և վարակված ծառերի էտի աշխատանքները պետք է կատարեն տարբեր մարդիկ՝ առանձնացված գործիքներով: - Այգին պարարտացնել ֆոսֆորական պարարտանյութերով: - Ծաղկումից առաջ և ծաղկաթափից հետո ծառերը սրսկել պղնձի օքսիքլորիդով՝ 4կգ/հա, (10լ ջրին 40գրամ) ծախսի՝ նորմայով կամ բորոգոյան հեղուկի 1%-ոց լուծույթով (10լ ջրին 100գր պղնձարջասպ և 100 գր չիանգած կիր): 	 

Հիվանդության և վնասատուի հասցված վնասի նկարագրությունը	Պայքարի միջոցառումները	Նկարներ
<p>ՄՈՆԻԼՅԱԼ ԱՅՐՎԱԾԵ</p> <p>Հիվանդությունը տարածված է պտղաբուծությամբ զբաղվող շրջաններում: Հիվանդության զարգացմանը նպաստում է գարնանը, ծաղկման ժամանակ, սառը, խոնավ եղանակը:</p> <p>Մոնիլոզով վարակվում են ծաղիկները, շվերը, պտուղները: Այս հիվանդությունը ունի արտահայտման երկու բնույթ, հանդիպում են և՛ մոնիլյալ այրվածքը և մոխրագույն պտղափտումը: Մոնիլյալ այրվածքը այս հիվանդության գարնանային ձևն է, արտահայտվում է ծաղիկների հանկարծակի գորշացմամբ ու չորացմամբ, որին հաջորդում է տերևների, միամյա շվերի, երիտասարդ պտղաշվերի թառամումն ու չորացումը: Հիվանդության արտահայտման ձևը շատ նման է ցրտահարվածի, այրվածի, այստեղից էլ առաջացել է անվանումը:</p> <p>Հիվանդության արտահայտման մյուս ձևը մոխրագույն պտղափտումն է, ինչն սկսվում է պտղի վրա ոչ մեծ, մուգ բծի ձևով, որն արագ մեծանալով, ընդգրկում է ամբողջ պտուղը՝ մակերեսին առաջացնելով բազմաթիվ մանր, ցրված կամ իրար միացած մոխրագույն բծեր:</p> <p>Պտուղների վարակվածության գործում մեծ նշանակություն ունի պտղի մեխանիկական վնասվածությունը, այս առումով էլ պտղափտումն ավելի մեծ վնաս է պատճառում այն այգիներում, որտեղ տարածված են վնասատուները կամ եղել է կարկտահարություն: :Հաճախ վարակը տարածվում է առողջ և հիվանդ պտուղների շփման միջոցով:</p>	<p>Անհրաժեշտ է վերացնել վարակի աղբյուրները, հավաքել, այգուց հանել և ոչնչացնել հիվանդ, մուլիֆիկացած պտուղները, ծաղկումից մոտ մեկ ամիս անց կտրել ու այգուց հեռացնել այրել վարակված ընձյուղները: Աշնանը, տերևաթափի նախօրյակին կամ գարնանը, մինչև բողբոջների ուռչելը, սրսկել բողբոջյան հեղուկի՝</p> <p>3% -ոց լուծույթով: Վեգետացիայի ընթացքում կարելի է սրսկել</p> <p>տասպա - 0,3 լ/հա (10 լ ջրին՝ 3 մլ.), տոպագ - 0,4 լ/հա+ սկոր- 0,2 լ/հա (10 լ ջրին՝ 4 մլ.+ 2 մլ), տելդոր – 1,0 լ/հա 10 լ ջրին՝ 10 մլ.):</p>	 

Հիվանդության և վնասատուի հասցված վնասի նկարագրությունը	Պայքարի միջոցառումները	Նկարներ
<p>ՏԱՆՁԵՆՈՒ ԶՈՍ</p> <p>Այս հիվանդությունը առավել տարածված է նախալեռնային ու լեռնային շրջաններում: Զոսերի վնասակարությունն արտահայտվում է ոչ միայն բերքի նվազումով, այլև բերքի որակի զգալի վատացմամբ: Տերևների վրա վարակն արտահայտվում է բծերի ձևով, որոնք սկզբում թույլ են արտահայտվում, թեթև դեղնավուն, մի տեսակ յուղային, ապա կանաչադեղնավուն, հետագայում՝ թավշանման սև բծերի ձևով:</p> <p>Բծերը տանձենու մոտ հիմնականում տերևի հակառակ երեսին են ի հայտ գալիս: Եթե վարակվում են գարնանը կամ ամռան առաջին կեսին, բծերը սովորաբար լինում են խոշոր՝ 8-10մմ տրամագծով և ավելի մեծ, իսկ ուշ վարակի դեպքում՝ 2-3մմ: Ուժեղ վարակված տերևները կարող են ժամանակից շուտ թափվել:</p> <p>Պտուղների վրա բծերը կլորավուն են, համարյա սև, խիստ ընդգծված, հաճախ բաց երիզով: Վաղ վարակի դեպքում պտուղները տձևանում են, վարակված մասում առաջանում են ճաքեր: Տերևակոթերի և պտղակոթերի վարակն առաջացնում է վաղաժամ տերևաթափ, չորացում:</p>	<p>- Կիրառել պայքարի համալիր միջոցառումներ, որոնք ընդգրկում են ինչպես քիմիական, այնպես էլ ագրոտեխնիկական միջոցառումներ: Ագրոտեխնիկական միջոցառումներից արդյունավետ է վարակված շվերի, տերևների հեռացումն այգուց, ճիշտ պարարտացումը ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերով, ճիշտ էտն ու ձևավորումը:</p> <p>- Ուժեղ վարակվող այգիներն աշնանը, տերևաթափից հետո, սրսկել բողբոջյան հեղուկի 3%-անոց լուծույթով, իսկ վաղ գարնանը՝ բողբոջների ուռչելու ժամանակ խորուսով՝ 0,2 լ/հա (10 լ ջրին՝ 2 մլ): Հաջորդ սրսկումը կատարել վարդագույն կոնի փուլում, ծաղկումից առաջ, երբ ծաղկաթերթերի թափվելուց անմիջապես հետո սկորով՝ 0,2 լ/հա, (10 լ ջրին՝ 2մլ), մյուսը՝ դրանից 14-16 օր հետո տասպայով՝ 0,3 լ/հա (10 լ ջրին՝ 3 մլ): Անհրաժեշտության դեպքում կատարել ևս մեկ սրսկում՝ սկորով կամ տասպայով:</p> <p>- Եթե աշնանը բողբոջյան հեղուկով սրսկում չի կատարվել, այն կարելի է իրականացնել վաղ գարնանը՝ մինչև բողբոջների ուռչելը:</p>	 

Հիվանդության և վնասատուի հասցված վնասի նկարագրությունը	Պայքարի միջոցառումները	Նկարներ
<p>ՏԱՆՁԵՆՈՒ ՄՂՅՈՂ</p> <p>Ձմեռում է թրթուրի փուլում հողի մեջ պատրաստած բոժոժում մինչև 15 սմ խորության վրա:</p> <p>Գարնանը թրթուրները սկսում են հարսնյակավորվել: Այս փուլը տևում է 15-20 օր, որից հետո սեռահատուն միջատները թռչում են:</p> <p>Թռիչքից ու բեղմնավորումից մի քանի օր հետո եգերը սկսում են ձվադրել արդեն բացվող տանձենու կոկոնների հիմքի մասում: Ձվադրման նպատակով սղոցված հատվածը 6-8 ժամ անց գորշանում է և սևանում, որով և աչքի է ընկնում:</p> <p>Ձվից դուրս գալով՝ ծաղիկների պսակաթերթերի թափվելու շրջան/ թրթուրը սնվելով շարժվում է դեպի ծաղկի բաժակի հատակը: Այնուհետև խորանում է կազմակերպվող պտղի մեջ սերմերը ուտելով վնասում է սերմնարանը:</p> <p>Մեկ թրթուրը կարող է վնասել մինչև չորս պտղի: Վնասված պտուղները թափվում են գետնին և թրթուրը դուրս գալով մտնում է հողի մեջ ու 2-3 օր անց անցնում է ձմեռման՝ իր պատրաստած բոժոժում:</p>	<ul style="list-style-type: none"> - Ծաղկակոկոնների բացվելուց առաջ սրսկել Բի 58 նոր 1.5լ/հա (10լ ջրին-15մլ): - Ծաղկումից առաջ ծառերը թափ տալ սավանի վրա, ոչնչացնել վնասատուները: 	
<p>ՏԱՆՁԵՆՈՒ ԶԱՌՑ ՏԻՉ</p> <p>Բավական տարածված վնասատու է, հանդիպում է տանձենու գրեթե բոլոր այգիներում:</p> <p>Այս տեսակը զգալիորեն փոքր է սովորական ոստայնատզից և անզեն աչքով հնարավոր չէ տեսնել: Հասցրած վնասի հետևանքով տերևների վրա՝ հակառակ երեսին, առաջանում են սկզբում սպիտակավուն գիտորներ, որոնք վնասատուի թվաքանակի ավելացմանը զուգընթաց որոշ ժամանակ անց ստանում են գորշագույն երանգավորում:</p> <p>Տանձենու քառոտ տզի հասցրած վնասի պատճառով ուժեղ վարակված այգիներում նկատվում է տերևների չորանացում և տերևաթափ:</p>	<p>Վեգետացիայի ընթացքում ծառերը փոխեփոխ սրսկել հետևյալ տզասպան պատրաստուկներից որևէ մեկով:</p> <p>Մենվիդոր (1,0 լ/հա, 10լիտր ջրին-10 մլ),</p> <p>Մկարատե գեոն (0,8-1,0 լ/հա, 10լիտր ջրին 8-10 մլ)</p> <p>օմայթ (1,5 լ/հա, 10լիտր ջրին-15մլ)</p>	

Հիվանդության և վնասատուի հասցված վնասի նկարագրությունը	Պայքարի միջոցառումները	Նկարներ
<p>ՏԱՆՁԵՆՈՒՍՈՎՈՐԱԿԱՆ ՏԵՐԵՎԱԼԿԻԿ</p> <p>Տանձենու սովորական տերևավիկը լայնորեն տարածված վնասատու է: Հանդիսանում է տանձենու առավել վտանգավոր վնասատուներից մեկը:</p> <p>Հասցրած վնասի հետևանքով տերևները, շվերը, պտուղները դանդաղ են զարգանում, դեֆորմացվում են: Տերևները գունաթափվում են, ծածկվում վնասատուի արտաթորանքով, որի հետևանքով ասիմիլյացիայի պրոցեսը խախտվում է և տերևները թափվում են:</p>	<p>Վեգետացիայի ընթացքում ծառերը փոխեփոխ սրսկել հետևյալ պատրաստուկներից որևէ մեկով:</p> <ul style="list-style-type: none"> - Կալիպսո (0.3լ/հա, 10լիտր ջրին-3մլ.), - Բի 58 նոր (1.5-2լ/հա 10լ ջրին-15-20մլ), - Ակտարա 0,3 կգ/հա, 10լիտր ջրին-3գ): 	
<p>ՏԱՆՁԵՆՈՒ ԺԱՆԵՎԱՄԱՆՈՒԿ</p> <p>Փոքրիկ 2,0-3,0 մմ երկարությամբ ցատկող միջատներ են, թրթուրները շատ դանդաղաշարժ են:</p> <p>Այս տեսակը ունակ է շատ արագ բազմացման:</p> <p>Եզը ապրում է մոտ մեկ ամիս և կարող է այդ ընթացքում դնել մինչև 600 ձու:</p> <p>Վնասատուն գաղութներով սնվում է տանձենու տերևների հակառակ երեսին, որի հետևանքով տերևները գունաթափվում են և ծածկվում վնասատուի գորշագույն արտաթորանքով և մասամբ թափվում:</p>	<p>Վեգետացիայի ընթացքում ծառերը փոխեփոխ սրսկել հետևյալ պատրաստուկներից որևէ մեկով:</p> <p>Մկոնֆիդոր մաքսի (0,1 կգ/հա, 10 լ ջրին 1 գ):</p> <p>Մկալիպսո (0.3լ/հա, 10լիտր ջրին-3մլ.),</p> <p>Բի 58 նոր (1.5-2լ/հա 10լ ջրին-15-20մլ.),</p>	